ՀՀ ՊՆ «ԹԵԺ ԳԻԾ»-Ի 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևան

2026թ.

2025 թվականի ընթացքում՝ ՀՀ ՊՆ «Թեժ գիծ»-ի մուտքային և ելքային զանգերի վերաբերյալ քանակական տվյալներ.



2025 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, «Թեժ գիծ»-ի զանգերի քանակը կազմել է 41214 զանգ, որից մուտքային՝ 36250 զանգ, ելքային՝ 4964 զանգ, տեխնիկապես բաց թողնված՝ 13623 զանգ[1]:

[1]**Ծանոթագրում**

Բաց թողնված զանգերի տվյալ մեծաթիվ քանակը պայմանավորված է տեխնիկական հանգամանքներով, այն առումով, որ դրանք ստացվում են համակարգ, երբ բոլոր օպերատորները միաժամանակ սպասարկում են զանգերը և մեկ բաժանորդի զանգը համակարգը դիտարկում է որպես 10-40 բաց թողնված զանգ, որն իրական տվյալների համադրությամբ առաջացնում է 98% շեղում:

Բոլոր ֆիքսված, բաց թողնված զանգերն օպերատորների կողմից հետադարձ կապի միջոցով պատասխանվում են: Արդյունքում ստացվում է 100% պատասխանելիություն:

Մուտքային և ելքային զանգերի վերաբերյալ վիճակագրություն.



2025թվականի ընթացքում ստացված զանգերի վերաբերյալ միջին վիճակագրական տվյալները հետևյալն են՝.

- Զանգի միջին տևողությունը՝ 00:03:00
- Զանգի առավելագույն տևողությունը՝ 00:15:00
- Օպերատորներին միանալու համար սպասման մեջ գտնվելու միջին տևողությունը՝ 10-15 վրկ.
- Օպերատորներին միանալու համար սպասման մեջ գտնվելու առավելագույն տևողությունը՝ 00:01:41

Ստացված զանգերի բովանդակային դասակարգում

«Թեժ գիծ»-ի օպերատորները զանգն ստանալուց անմիջապես հետո այն դասակարգում են ըստ հարցի/խնդրի տեսակի: Ստացված զանգերի բովանդակության վերաբերյալ գծապատկերը ներկայացված է ստորև.

Ստացված զանգերի դասակարգումն՝ ըստ բովանդակության.



2025 թվականի ընթացքում ստացված զանգերի մեծամասնությունը վերաբերել է տեղեկատվական հարցերին, մասնավորապես՝

- Դիմումների ընթացակարգեր,
- Կոնտակտային տվյալներ,
- Տեղեկատվական բնույթի այլ հարցեր,
- Տեղեկանք/փաստաթուղթ տրամադրելու կարգի վերաբերյալ:



2025 թվականիընթացքում ՊՆ «Թեժ գիծ»-ով ոչ կանոնադրային հարաբերությունների վերաբերյալ ստացված զանգերի թիվը նախորդ տարվա համեմատ զգալիորեն նվազել է:

Յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ ճշգրտումներ են կատարվել ինչպես աշխատանքային կարգով, այնպես էլ համապատասխան գրություններով:



2025 թվականի ընթացքում ՊՆ «Թեժ գիծ»-ով ստացվել է շուրջ 55 գանգատ: Յուրաքանչյուր դեպք առանձին քննության է ենթարկվել, ըստ անհրաժեշտության՝ գրություններ են ուղարկվել իրավասու ստորաբաժանումներ:

Ստացված գանգատներից 20-ը եղել են անանուն, և զանգահարողները չեն փոխանցել խնդրի լուծման համար անհրաժեշտ տվյալները՝ զորամաս, անուն, ազգանուն և այլն, որոնք նույնպես ահմանված կարգով ընթացքավորվել են:



2025 թվականի ընթացքում ապօրինի գործունեության վերաբերյալ ստացված զանգերը վերաբերել են կոռուպցիոն դրսևորման դեպքերին և զորամասից գողության դեպքերին: Յուրաքանչյուր դեպք առանձին քննության է ենթարկվել, և տեղեկատվությունը փոխանցվել է իրավասու ստորաբաժանումներին:

Բոլոր հարցերը, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով լուծման ենթակա են եղել, անմիջական լուծում են ստացել ՄԻԲԿ կենտրոնի կողմից:

Ստորև ներկայացված են ՄԻԲԿ կենտրոնի կողմից լուծում ստացած առավել խնդրահարույց հարցերը.

- Անվճար բուժօգնության վերաբերյալ հարցեր
- Ատեստավորման հետ կապված հարցեր
- Գանգատներ զորամասից
- Զինծառայության հետ կապված հարցեր
- Զինվորական վարժանքների, զորավարժությունների վերաբերյալ հարցրեր
- Զինվորի արձակուրդի վերաբերյալ հարցեր
- Զորակոչի վերաբերյալ հարցեր
- Հանցագործության հատկանիշներ պարունակող դեպքեր (ընթացքավորվել են սահմանված կարգով)
- Ժամկետային զինծառայողի առողջական վիճակի հետ կապված հարցեր
- Պայմանագրային ծառայության վերաբերյալ հարցեր
- Ֆինանսական հարցեր
- Հանցագործության հատկանիշներ չպարունակող դեպքեր